

Է.

56. Համայն նկեալ մէջ էա էլին զըմէն էլ քաշեց սուր: Մենակ մէկ թօխալ կճէ մը¹ որ գնացեր էր վեր դեռին, ազատուաւ գնաց մօտ Մորայ Մէլիքն ճշարով խապար տվեց թէ, քրոյ էլն զըմէն թրէ ընցուց Սառնայ գեաւուրն:

57. Մորայ թագաւոր մէջլիս արաց, խէլացի մարտեր ժողվեց, ընոնցմէ խորհուրդ խարցուց, որ ուր ճամպախ մը նշանց տան Սառնայ գեաւուրի կեանքը երկրէն վերցնելու, որ ուր թագաւորութեն չկործանի:

58. Էն ժողովքի մէջ Կոզ Պատհին անունով մէկ կտրիճ փահլեվան մը կէր, ասաց թագաւորին թէ. «Քե լայելս² չեմ տեսնայ, որ աիւ խեծել անես էրթաս վեր դեաւուրի մը: Զիկ 40 հատ ֆէհրըզ փահլեվան տուր, էրթամ Սառնայ քեաղաք թաւան անեմ բերեմ քե խամոր:

59. 40 հատ էրկէն կրնկաեր բերեմ, որ քրոյ ըղտեր բաւնան.

40 կօլօտ կնիկ բերեմ, որ էրկանք աղան.

40 ազապ լամ բերեմ, հէօլ խաղան.

40 ազապ ակշիկ բերեմ քե արմաղան³.

40 հատ աջառ, 40 հատ էրինջ բերեմ.

40 չափ սիւտակ առծաթ, 40 չափ տեղին սակ բերեմ քե խաւջ⁴:

60. Թագաւոր ինոր կամք կատարեց: Կոզ Պախտին տուեց 40 փահլեվան, քչեց վեր Սառնոյ քեաղքին. ուր ասած կնկտեր, մարտեր, տաւարներ հըմէն բռնեց ջակ ջոկ աներու մէջ արեց, տաներ փակեց: Զափն առեց գնաց տեխ բերդ:

61. Տաւիթ որ որսը նէճերութնի դնացեր էր. էկաւ քաղաք տեսաւ որ կորեկի առտի տէր պառաւ նստե Տաւիթին կանիծի թէ, քրոյ պատճառաւ Մորայ Մէլիք իմ ակշիկն էլ խետ մէկալոնց բռնեց տարաւ էսիր:—Տաւիթն ասաց. աիւ արե խետ ձիկ էն տուռ, որ ակշիկներ ներս լցեր են, ձիկ նշանց տուր, քրոյ ակշիկ կազատեմ: Պառաւ զըմէն գոներ Տաւիթին նշանց խտուր: Տաւիթ տաներ կտառտեց, էսիրներ ազատեց, քչեց գնաց բեռտ, տէսաւ որ Կոզ Պատհինի 40 փահլեվաններ թրեր չլտած⁴ կէսն մէկ կողմը, կէսն մէկ էլ նստեր են:

1 Թուրքի, բուրդի աղջիկ, կին: 2 Վայել: 3 Սիրուն. չքնաղ, որ ընդմարապէս կինարմատի. բայց եւ տղամարդի անուն է: 4 Մերկացրած: